

# ՓՈՅՏԱՆՑՈՒԹԻՒ ԽՈՆԱՎՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍԸ ԱՆՄԻԶԱԿԱՆՈՐԵՆ ՈՐՈՇԵԼՈՒ ՀԱՐՄԱՐԱՆՔ

Ա. ԴՈՒՐՅԱՆ  
ՖԱՆԻԱՆ-ՋԻ ապարաների բաժնի ավագ ինժեներ


Հայէլեկտրագործարանին կից էլեկտրասեխնիկական արդյունաբերության գիտա-հետազոտական ինստիտուտի ֆիլիալի (Կոճատ' Ֆնիին) էլեկտրական ապարատների և ավտոմատիկայի բաժնը մշակել է խոնավաչափ՝ մեկուսիչ գետալների պատրաստման համար օգտագործվող փայտանյութի խոնավության տոկոսը որոշելու ապարակով:

1-ին նկարում բերված է պատրաստված էլեկտրանային խոնավաչափի սկզբունքային սխեման:

կոններով: Խոնավությունից կախված է փայտանյութի նմուշի օհմային դիմագրությունը:

6H8 կրկնակի տրիոդի երկրորդ կեսը օգտագործվում է դիոդի ռեժիմում որպես համուղղիչ, կատոդային կրկնիչի նմուշան համար: Մշակված դորձիքում նախատեսված է սոնդ ցանցի լարման ֆերրոեպոնանսային կայումացումը:

Փոխանցիչն իրենից ներկայացնում է գետի նաբակից շինված շափոց, որի մեջ ներմոնտաժ-



Նկ. 1. Էլեկտրանային խոնավաչափի սկզբունքային սխեման:

Դորձիքի շափիչ մասը ներկայացնում է տրիոդ՝ (6H8 լամպի կեսը) կատոդային կրկնիչի ռեժիմում. նրա անողային հոսանքը կախված է փայտանյութի նմուշի օհմային դիմագրությունից: Փայտանյութի օգտագործվող նմուշը փոխանցիչի միջոցով միացվում է սխեմային «B» կետի և լամպի ցանցիկի մեջ:

Միկրոամպերմետրի ցուցնակը, որը միացված է կրկնիչի անողային զդիքային, աստիճանափորված է անմիջականորեն խոնավության տո-

ված են կոննային երկու կոնտակտ «X» (նկ. 1): Դրանցից մեկը կոշտ կերպով ամրացված է շափոցի վրա, իսկ մյուսը շարժական է: Փայտանյութի փորձարկվող նմուշը սեղմվում է «X» կոնտակտների միջև, թելիկների լայնական ուղղությամբ:

Պատրաստված խոնավաչափը հնարավորություն է տալիս շափիչ 3-ից մինչև 20% խոնավություն և աստիճանավորված է կիրառվող ջիմ-

նական փայտանյութի համարի համար: Սակայն սա կարող է աստիճանավորվել նաև փայտանյութի այլ տեսակների համար:

Տվյալ գործիքի օգնությամբ խոնավության չափման պրոցեսը 5 րոպեից ավելի շի տևում, մինչդեռ առաջնարում գոյություն ունեցող մեթո-

դի դեպքում (հաշորդականորեն չորացնելու կշռելու միջոցով) նույն պրոցեսի համար պահանջվում էր 4-ից մինչև 6 ժամ:

Գործիքի գաբարիտային չափերն են՝  $220 \times 235 \times 260$  մմ: Գործիքի քաշը 3,5 կգ է:

## ԿԱՐԲԻԴԱՅԻՆ ՎԱՐՈՒՄԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՒՄԻՉԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՓՈՓՈԽՈՒՄԸ ԷԼԵԿՏՐՈԴՆԵՐԻ ԿՈԲԱՑՄԱՆ ՌԵՖԻՄԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ԲԱՐԵԼՈՎԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ

7500—8200 կվտ կարողությամբ կարրիդային վառարաններում, երբ նրանք շահագործվում են լարման բարձր աստիճաններում (153 վլտ), մեկ հալանցքի միջով կարրիդի հնդուկաթափումը յուրացնելու հետ ծայրային ֆազաներում խիստ մեծանում է էլետրոդների գծային ծախսը (մի հերթափոխի ընթացքում մինչև 400 մմ): Էլեկտրոդների գծային մեծ ծախսը դժվարացնում է էլեկտրոդների կոքսացման ռեժիմի վարումը և մեծացնելով նրանց ընդհատումների թիվը, առաջ է բերում կարրիդային վառարանների մեծ պարապուրդներ (միայն 1956 թ. ցեխում տեղի է ունեցել ընդհատումների 67 դեպք և վառարանների 96 ժամ պարապուրդ):

Էլեկտրոդների կոքսացման ռեժիմի կարգավորումը ստիպողաբար տարվում էր էլեկտրոդի և էլեկտրոդարունիշի շապկի միջև օդի մատուցումը խիստ պակասեցնելու միջոցով կոքսացման զոնան բարձրացնելու համար: Այդ առաջացնումը էր բոցի թափանցումը շապկի տակ և էլեկտրոդարունիշը էլեմենտների քայլայումը (կոնտակտային սալերի ունկերն ու կախուցները, շապկի և պողպատի կախովի օղակը), որն իր հերթին կը քառատում էր պլանա-նախադպուշական մի վերանորոգումից մինչև մյուտ տևող ժամանակաշրջանը և մեծ շափով մեծացնում աշխատանքի ծավալը:

1—2 ցեխի պետի տեղակալ Ս. Քալաշյանը մեխանիկ Ռ. Արիստակեսյանի հետ միասին, էլեկտրոդների կոքսացմանը բարելավելու, նրանց ընդհատումների թիվը կրճատելու և պարապուրդները վերացնելու նպատակով առաջարկեցին շապիկի կարճացման միջոցով փոփոխել կոնտակտային սալերի վերևում գտնվող էլեկտրոդարունիշի ստորին մասի կոնտարկցիան (տե՛ս էսքիզը): Դրա շնորհիվ ըստեղծվում է հենացող գազերի ջերմությամբ տաքացփող օդի ներհոսումը դեպի էլեկտրոդի մակերեւույթը, որը գտնվում է կոնտակտային սալերի վերևում, 300 մմ լայնություն ունեցող գտում և ապահովում է էլեկտրոդի չորացումը:

Այս առաջարկի արմատավորումը թույլ տվից բարելավել էլեկտրոդների կորուսացման ռեժիմը և մեծ շափով կրճատել վառարանի պարապուրդը: Առաջարկության արմատավորման տնտեսական էֆեկտը կազմում է տարեկան 30.956 ռուբլի:

(«Փորձի փխանակում», Ս. Մ. Կիրովի անվան գործարանի ինքնամացին բյութեան, Երևան, 1958):